ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/L-60 > ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան **«19» «06» 2025թ.**
Ժամը 10:00

1. ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ ՆԳՆ կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով **սնուցման մարտկոցների** /CPV 30237111/2/ ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/L-60 ծածկագրով ընթացակարգի 18.06.2025թ.բացման նիստում արձանագրվեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/L-60 ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետին /17.06.2025թ. ժամը 10:00/ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրել են **«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, «Սվետան» ՍՊԸ-ն, «Տոպազ-95» ՍՊԸ-ն, «ՍԵԳ» ՍՊԸ-ն:**

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/L-60 ծածկագրով ընթացակարգով **նվազագույն գնային առաջարկ** ներկայացրած մասնակից՝ **«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ **թիվ 1 հավելված՝ դիմում-հայտարարությունում և թիվ 1.3 հավելված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, թիվ 1.1 հավելված՝ տեխնիկական բնութագրում բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ /առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը/:**

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՈՋ/2025/L-60 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ /1/ աշխատանքային օրով և **«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին** առաջարկել /1/ աշխատանքային օրվա ընթացքում կատարել վերոգրյալ անհամապատասխանությունների շտկումները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված մեկ /1/ աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝

ՀՀ ՆԳՆ ՈՋ հրամանատարի 1-ին տեղակալ-շտաբի պետ, գնդապետ **Գ. Մարգարյան**

Հանձնաժողովի անդամներ՝

ՀՀ ՆԳՆ ՈՋ շտաբի կապի բաժանմունքի պետ, փոխգնդապետ **Ա. Պապյան**

ՀՀ ՆԳՆ ՈՋ շտաբի կապի բաժանմունքի սպա, կապիտան **Կ. Սահակյան**

Քարտուղար՝

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀԲ գլխավոր մասնագետ **Լ. Սահակյան**